

**ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը  
Ուսանողների միջազգային օրվա առթիվ**

Սիրելի՛ ուսանողներ,

Շնորհավորում եմ ձեզ նոյեմբերի 17-ի՝ Ուսանողների միջազգային օրվա առթիվ:  
Տոնական օրերին բնորոշ բարեմաղթանքներ հղելուց բացի, ցանկանում եմ  
վստահեցնել, որ ձեզանից յուրաքանչյուրի եռանդով, նպատակասլացությամբ ու  
նվիրվածությամբ են պայմանավորված մեր վաղվա օրվա հաջողությունները: Դուք եք  
մեր հասարակության շարժիչ ուժը, որը պետք է կարողանա համախմբվել  
հետաքրիր գաղափարների շուրջ ու միասնականություն դրսևորելով հասնի իր  
նպատակներին:

Կիրթ ու բանիմաց ուսանողին է վերապահված ներկայիս ձեռքբերումների  
կրկնապատկողի, նաև բացթողումների, թերությունների մասին բարձրաձայնողի ու  
շտկողի դերը: Սերնդափոխությունն ավելի դյուրին է կատարվում, երբ սկսնակն ու  
փորձառուն համախոհներ են լինում, միասին ճանապարհ են անցնում, իրենց  
մտավոր ներուժն ու կարողությունները ներդնելով ի նպաստ երկրի զարգացման ու  
ժողովրդի բարեկեցության:

Լիահույս եմ, որ ձեր հայրենասիրությամբ ու հաստատակամությամբ հաղթահարելու  
եք ձեզ բաժին հասած դժվարություններն ու ակտիվ դիրքորոշմամբ ավելի եք  
ամրապնդելու հավատը մեր հայրենիքի լուսավոր ապագայի հանդեպ:

Կրկին շնորհավորում եմ, մաղթում եմ հաջողություններ, երջանկություն, իղձերի  
իրականացում:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**



**Վ. Հակոբյան**

17 նոյեմբեր 2013թ.